ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2022 թվականի փետրվարի 25-ի երկրորդ նիստի օրակարգը՝

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2. Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2021թ գործունեության տարեկան հաշվետվության մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

3. Ապարան համայնքի ավագանու 27.12.2021թ. N 105-Ա որոշման 2-րդ մասին N3 և N7 հավելվածներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

4. Ապարան համայնքի ավագանու 27.12.2021 թ N 104-Ա որոշման 1-ին մասի N 2 հավելվածում փոփոխություն կատարելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

5. Ապարան համայնքի ավագանու 27.12.2021 թ N 106-Ա որոշման 1-ին մասի դ) կետի N 1.4 հավելվածում փոփոխություն կատարելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

6. Ապարան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ փոփոխություններ կատարելու մասին.

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

7.Ապարան համայնքում հողամասերը վարձակալության եվ /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

8. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգի և վարձակալության տրամադրման դրույքաչափերի հաստատման մասին

(զեկուցող՝Ռ.Գալստյան)

9. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող ,,Գրանտ Ռոզ,, ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

(զեկուցող՝Վ.Սուքիասյան)

10. Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝Վ.Սուքիասյան)

11. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունները բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության փոխելուն հավանություն տալու:

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

12. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

(զեկուցող՝Վ.Սուքիասյան)

13. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 3.68967հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝Վ.Սուքիասյան)

14. Ապարան համայնքի մի խումբ բնակիչների հարկային արտոնություններ տրամադրելու մասին:

(զեկուցող՝ Ն.Սիրեկանյան)

15.Ապարան համայնքի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊՁԲ-09/22 ծածկագրով ծաղիկների ձեռք բերման նպատակով գնումների համակարգում փոփոխություններ կատարելու և մեկ անձից գնում կատարելու համար թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Հ.Հովսեփյան)

16.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 17-Ա

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2021Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն, 2015թ. դեկտեմբերի 10-ի թիվ 856-Ն հրամանների պահանջները և Ապարանի համայնքապետի կողմից հաստատված 2021-2022թթ ռազմավարական ու 2021թ. տարեկան ծրագրերով, ներքին աուդիտի ծառայություն իրականացնող ,,ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ,, ՍՊԸ կողմից 2021թ աուդիտ է իրականացվել Ապարանի համայնքապետարանում և համայնքային ենթակայության կոմունալ ծառայություններում: ՈՒսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների, թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ անցկացվել են քննարկումներ, հաստատվել են գործողությունների ծրագիր, որը հետևողականորեն իրականացվում է, ուստի

Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի համայնքապետարանում, համայնքի Ապարանի և Արագածի կոմունալ ծառայությաուններում 2021թ. անցկացված ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը:
2. Համայնքի ղեկավարին՝
ա/հետևողականորեն ավելի բարձրացնել ներքին աուդիտի իրականացման արդյունավետությունը, ապահովել ուսումնասիրությունների անհրաժեշտ խորություն ու բազմակողմանիություն:
բ/ուժեղացնել հսկողությունը կատարված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված խախտումների ու բացթողումների վերացման ուղղությամբ, ձեռնարկել անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ հետագայում դրանք բացառելու համար:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի
2021 թվականի գործունեության
տարեկան հաշվետվություն

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն
1.	Ներածություն	Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը ուղղված է ներկայացվելու Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ղեկավարին, որում ամփոփված ենեներքին աուդիտի պարտականություններ կատարող «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կողմից տարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները: Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություն ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև և բացահայտել ի հայտ եկած շեղումները և դրանց պատճառները: Եթե կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև առկա են շեղումներ, ապա, պարզելով այդ շեղումների պատճառները, հարկավոր է որոշում կայացնել ներքին աուդիտի տարեկան ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Հաշվետվությունն ընդգրկում է 2020 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը: Հաշվետվությունը նպատակ ունի ամփոփ ներկայացնելու 2021 թվականի ընթացքում «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կողմից աուդիտի ենթարկված միավորների և ոլորտների նկարագրությունը, կատարված առաջադրանքների եզրակացությունները և ներկայացված առաջարկությունները, դրանց արդյունքում համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարված և կատարման ընթացքում գտնվող աշխատանքները և շտկումները:
2.	Կազմակերպության ներքին հսկողության գործընթացները	Համայնքապետարանում և կից կազմակերպություններում ներդրված են հետևյալ հսկողության գործընթացները՝ ▪ կազմակերպության կառուցվածքը օժանդակում է արդյունավետ որոշումների կայացման գործընթացին, ▪ ծախսերը ճշտությունը, հիմնավորվածությունը և դրանց արդյունավետությունը հսկվում է ֆինանսական բաժնի և համապատասխան աշխատակիցներիկողմից, ▪ աշխատակիցների հիմնական պարտականությունները արտացոլվում են պաշտոնի անձնագրերում և աշխատանքային պայմանագրերում, ▪ աշխատակիցների հաճախելիության մատյանի կիրառում, ▪ սինթետիկ և անալիտիկ հաշվառումները հիմնականում իրականացվում են համակարգչային ծրագրերով, ▪ գնահատվում և հաստատվում են հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատությունը, ▪ պետական գնումների գործընթացը: Ներքին հսկողական գործընթացները հիմնականում գործում են արդյունավետ , անհրաժեշտ են հսկողական գործընթացներ ներդնել նաև սպասարկման ոլորտներում, արդյունավետ աշխատանքը ապահովելու նպատակով: Հսկողական համակարգերի ոչ արդյունավետ իրականացման արդյունքում աուդիտի ենթարկված միավորներում հիմնականում առկա են ներքոհիշյալ թերությունները և բացթողումները՝ - Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջների ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ սահմանված կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել հողի հարկի և գույքահարկի գծով արտոնություններ: Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը: - Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ սահմանված կարգի 5-րդ կետի, այն դեպքում, երբ արտոնությունը հայցվում է հարկ վճարողի կողմից, հարկ վճարողը համայնքի ղեկավարին է ներկայացնում գույքահարկի և (կամ) հողի հարկի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ դիմում՝ նշելով հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկային արտոնության տեսակը և հայցվող արտոնության գումարը՝ հարկային արտոնություն ստանալու անհրաժեշտության հիմնավորմամբ: - Արտոնություն հայցող կազմակերպությունների կողմից համայնքի ղեկավարին ներկայացվում են նաև՝ 1) տեղեկություններ՝ առաջացած հարկային պարտավորությունը ժամանակին կատարելու անհնարինության մասին հիմնավորմամբ. 2) տեղեկություններ տույժերի ու տուգանքների առաջացման մասին, որոնք պետք է պարունակեն

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն
		դրանց առաջացման պատճառները: Համայնքի ղեկավարը հարկ վճարողի դիմումը և նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ 1) հարկային արտոնության տրամադրմանը համաձայնելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում հարկային արտոնության գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև հարկային արտոնություններ տալու վերաբերյալ հարկ վճարողի ներկայացրած փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը: - «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 13 –րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներր, որտեղ ասվում է. «Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարն ուղղվում է՝ ա) նախորդ (եզրափակված) բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝ առկա պարտավորությունների կատարմանը. բ) սույն մասի «ա» կետում նշված պարտավորությունները կատարելուց հետո առաջացած միջոցների մնացորդն ուղղվում է համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ծախսերի ֆինանսավորման համար»: - 2020 թվականի հունիսի 5-ին կնքված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-50/20 պայմանագրերի վճարման ժամանակացույցով 100 տոկոս վճարում է նախատեսված 2020 թվականի հունիս ամսին, սակայն վճարումը կատարվել է 2021 թվականի ապրիլ ամսին, որի պատճառով Վաճառողը դատական ճանապարհով պահանջում է տույժ: - 2019 թվականի մայիսին կնքվել է պայմանագիր ասֆալտի փոսային նորոգման աշխատանքների համար, աշխատանքները կատարվել են, սակայն առ այսօր ամբողջական վճարումը Համայնքապետարանի կողմից իրականացված չէ: Պայմանագիրը և կից փաստաթղթերը Համայնքապետարանի կողմից չի ներկայացվել, քանի որ քննչական մարմինները առգրավել են: - 2020 թվականի գնումների պլանը հաստատվել է 2020 թվականի հունվարի 8-ին, սակայն չի հրապարակվել, իսկ 2020 թվականի հունվարի 30-ին հաստատվել է փոփոխված գնումների պլանը և հրապարակվել է հունվարի 31-ին: Սակայն առանց գնումների պլանի հրապարակման Համայնքապետարանի կողմից հունվարի 13-ին իրականացվել է իր կարիքների համար զրենական պիտույքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20 ծածկագրով ընթացակարգ: - Համայնքապետարանի կողմից հունվարի 14-ին իրականացվել է իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-03/20 ծածկագրով ընթացակարգ: - Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է: - Համայնքապետարանը իր կարիքների համար կոմունալների վարձակալություն ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ՄԱԾՁԲ-07/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հունվարի 21-ին ՀՀ-ԱՄ-ԱՔ-ՄԱԾՁԲ-07/20 պայմանագիրը կնքված է մի շարք խախտումներով: - Համայնքապետարանը իր կարիքների համար ՝ Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայության ձեռքբերման ՀՀ-ԱՄ-ԱՔ–ՄԱԾՁԲ 12/2020 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու 17.02.2020թ. որոշման մասին տեղեկատվությունը հրապարակել է 21.02.2020թ (3 աշխ. օր ուշացում), 2020 թվականի փետրվարի 18-ին կնքված N «ՀՀ-ԱՄ-ԱՔ–ՄԱԾՁԲ 12/20» պայմանագրի մասին տեղեկատվությունը հրապարակել է 21.02.2020թ (2 աշխ. օր ուշացում) - Համայնքապետարանը իր կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման ՀՀ-ԱՄ-ԱՔ–ՄԱԱՇՁԲ 13/2020 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու 2020 թվականի փետրվարի 11-ի թիվ 1 որոշման մասին տեղեկատվությունը հրապարակել է 21.02.2020թ (7 աշխ. օր ուշացում): 2020 թվականի փետրվարի 13-ին կնքված N «ՀՀ-ԱՄ-ԱՔ–ՄԱԱՇՁԲ 13/20» պայմանագրի մասին տեղեկատվությունը հրապարակել է 21.02.2020թ (5 աշխ. օր ուշացում): - Համայնքապետարանը իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-03/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի փետրվարի 12-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-03/20, ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-03/20-1 և ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-03/20-2 պայմանագրերի մասին տեղեկատվությունը հրապարակել է 10.03.2020թ (42

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն
		աշխ. օր ուշացում): - Համայնքապետարանը իր կարիքների համար ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի, Քուչակ վարչական տարածքի մանկապարտեզի տարածքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-38/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 3 որոշման մասին տեղեկատվությունը հրապարակել է 27.04.2020թ. (9 աշխ. օր ուշացում): ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-38/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին տեղեկությունը չի հրապարակվել: - Համայնքապետարանը իր կարիքների համար Ապարան քաղաքի Մ. Բաղրամյան փողոցի թիվ 23 և 10 բնակելի շենքերի կից տարածքներում հանգստի գոտու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-76/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի օգոստոսի 7-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՇՁԲ-76/20 պայմանագրի կից վճարման ժամանակացույցում 100 տոկոս վճարում է նախատեսված հուլիս ամսին: - 2020 թվականի ընթացքում գնումների հայտարարությունները հրապարակված են միայն հայերենով, սակայն անհրաժեշտ է հրապարակել նաև ռուսերենով և անգլերենով: 1. Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ գնումների, այդ թվում՝ նախառարակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն: 2. Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն: - Համայնքապետարանը իր կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի փետրվարի 10-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20, ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20-1, ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20-2 և ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20-3 պայմանագրերի մասին տեղեկատվությունը՝ հրապարակել է ապրիլի 9-ին (41 աշխ. օր ուշացում): - 2020 թվականի փետրվարի 10-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20, ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20-1, ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20-2 և ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-02/20-3 պայմանագրերի վճարման ժամանակացույցերում 100 տոկոս վճարում է նախատեսված հունվար ամսին: - Համայնքապետարանը իր կարիքների համար արծաթափայլ եղենիների և ծաղիկների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-50/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հունիսի 5-ին կնքված ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԳՀԱՊՁԲ-50/20 պայմանագրերի մասին տեղեկատվությունը՝ չի հրապարակել: - Համայնքապետարանի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՔ-ԲՄԱՇՁԲ-73/20 ծածկագրով ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման համար 2020 թվականի հուլիսի 3-ին բաց մրցույթի հայտարարություն և հրավեր է հրապարակել, որտեղ ծածկագիրը սխալ է գրել և այն կրկնվել է այդ ընթացակարգին վերաբերվող բոլոր հայտարարություններում: - Նշված ընթացակարգի արձանագրությունները, կնքված պայմանագրի որոշման մասին տեղեկությունը հրապարակվել են ուշացումներով: - Նշված ընթացակարգի կնքված պայմանագրում կատարվել են փոփոխություններ՝ համաձայնագիր 1,2,3, սակայն փոփոխության վերաբերյալ տեղեկությունները տեղեկագրում հրապարակված չեն: Նշված պայմանագրի շրջանակներում իրականացվել են համադրման աշխատանքներ, որի վերաբերյալ կողմերի միջև համաձայնագիր կնքված չէ: - ՀՈԱԿ-ում հաշվապահությունը չի իրականացվում հաշվապահական համակարգչային ծրագրով: - Հիմնական միջոցների լիարժեք հաշվառում և մաշվածություն չի իրականացվել: - Տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ պարտադիր գույքագրում չի իրականացվել, բացակայում են ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի թիվ 2-Ն հրամանի հավելվածով սահմանված ՁԵՎ-Գ-3, ՁԵՎ-Գ -4, դրամական միջոցների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և այլ գույքագրման ցուցակներ: - 2020 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվություններ չի կազմվել: - Երթուղային թերթիկները մինչև 2020 թվականի մայիս ամիսը թերի են լրացված: Հաշվառումը չի համապատասխանում հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերին: - ՀՈԱԿ-ի աշխատակիցների անձնական գործերը սխալ են կազմված: - 2020 թվականի ընթացքում մի շարք պամանագրեր՝ հրապարակվել են ժամկետների խախտումներով, իսկ 13.04.2020թ. ՈԱՊ-ԿՈՄՈՒՆԱԼ-ՄԱԱՊՁԲ-41/20 պայմանագրի վճարման ժամանակացույցում

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն
		նշված է 100 %-ով վճարում հունիս ամսին , սակայն վճարումը կատարվել է մայիսի 6-ին: - Ապարան քաղաքի գերեզմանների շահագործման գործառույթների իրականացումը դրված է ՀՈԱԿ-ի վրա, սակայն ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ նման գործառույթ ընդգրկված չէ: - 2020 թվականի ընթացքում ՀՈԱԿ-ը չի իրականացրել գերեզմանների շահագործման հետ կապված որևէ գործառույթ: - Աղբահանության և ջրամատակարարման վճարների հաշվառում անալիտիկ (վերլուծական) մեթոդով չի իրականացվում: - ՀՈԱԿ-ում հաշվապահությունը չի իրականացվում հաշվապահական համակարգչային ծրագրով: - Հիմնական միջոցների լիարժեք հաշվառում և մաշվածություն չի իրականացվել: - Տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ պարտադիր գույքագրում չի իրականացվել, բացակայում են ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի թիվ 2-Ն հրամանի հավելվածով սահմանված ՁԵՎ-Գ-3, ՁԵՎ-Գ -4, դրամական միջոցների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և այլ գույքագրման ցուցակներ: - 2020 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվություններ չի կազմվել: - Երթուղային թերթիկները մինչև 2020 թվականի սեպտեմբեր ամիսը թերի են լրացված: Հաշվառումը չի համապատասխանում հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերին: - Չկան վառելիքի կտրոնների մուտքի և ելքի օրդերներ: - ՀՈԱԿ-ի աշխատակիցների անձնական գործերը սխալ են կազմված: - Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարությունը ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը: - 2020 թվականի ընթացքում մի շարք կնքված պայմանագրեր հրապարակվել են սահմանված ժամկետների խախտումներով. - Արագած համայնքի գերեզմանների շահագործման գործառույթների իրականացումը դրված է ՀՈԱԿ-ի վրա, սակայն ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ նման գործառույթ ընդգրկված չէ: - 2020 թվականի ընթացքում ՀՈԱԿ-ը չի իրականացրել գերեզմանների շահագործման հետ կապված որևէ գործառույթ: - Աղբահանության և խմելու ջրի վճարները գանձվում են շրջիկ հարկահավաքի կողմից, սակայն անդորրագրերի հաշվառման մատյան չի վարվում: Ներքին աուդիտի առաջադրանքների արդյունքում ի հայտ են եկել 51 հատ բացթողումներ և անհամապատասխանություններ, որոնցից 43-ը շտկվել են գործողությունների իրականացման ծրագրերով սահմանված ժամկետներում և ընդունվել են ի գիտություն, իսկ 8-ը գտնվում են շտկման փուլում: Խախտումների շտկման արդյունավետությունը գնահատվում է 84 տոկոս :
3.	Ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականը	Համայնքապետարանի ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան և 2021-2023 թվականների ռազմավարական ծրագրերին համապատասխան հաշվետու տարում պլանավորված երեք աուդիտորական առաջադրանքներից իրականացվել են երեքը: Իրականացվել են «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, «Ապարան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի և «Ապարան համայնքի Արագածի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի ֆինանսական աուդիտ: Ներքին աուդիտորի պարտականությունները իրականացվել է «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կողմից, որը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին աուդիտորի որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում: 2021 թվականի ընթացքում տեղի է ունեցել պլանավորված աուդիտորի փոփոխություն՝ Քրիստինե Առուստամյանի փոխարեն աուդիտորական առաջադրանքների մի մասը կատարվել են «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի ներքին աուդիտորներ Սուսաննա Մեղրակյանի և Զաբել Մաթոսյանի կողմից: Հաշվետու տարվա ընթացքում վերջիններիս կողմից ծախսված ժամանակահատվածը ըստ գործընթացների և միավորների ներկայացված են ներքոհիշյալ աղյուսակում՝ մարդ/օրերով.

Հ/Հ	Միավորի անվանումը	Պլանավորված ժամանակը	Փաստացի ծախսված ժամանակը	Շեղման պատճառը

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն

Ընթացակարգերի իրականացում				
1.	«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	200	200	
2.	«Ապարան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ	120	120	
3.	«Ապարան համայնքի Արագածի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ	120	120	
4.	Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	24	0	Չնախատեսված դեպքեր չեն եղել
5.	Շարունակական մասնագիտական վերապատրաստումներ	10	10	

Աուդիտի առաջադրանքի արդյունավետության գնահատման ստուգաթերթերով տրված գնահատականները

	Գնահատմանտարրեր	Միջին գնահատական
1.	Առաջադրանքի յուրաքանչյուր նպատակի իրագործման համար մշակվել է աուդիտի աշխատանքային ծրագիր	4
2.	Աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի աշխատանքային ծրագրերը մշակվել և ստուգվել են պահանջվող ժամկետներում	4
3.	Աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի աշխատանքային ծրագրերը արդյունավետ կերպով անդրադառնում են ռիսկերի գնահատմամբ սահմանված հայտնի ռիսկային դրդիչներին և բավարար են ներքին հսկողության կիրառվող համակարգերի արդյունավետությունը գնահատելու համար	4
4.	Աուդիտի աշխատանքային ծրագիրը և համապատասխան աշխատանքների շրջանակը ճշգրտվել է՝ ելնելով փաստացի պայմաններից	3
5.	Աշխատանքային փաստաթղթերում հստակ կերպով հիմնավորված են և/կամ բացատրվում են յուրաքանչյուր աուդիտի աշխատանքային ծրագրի հիման վրա կատարված աշխատանքների արդյունքները և եզրակացությունները	4
6.	Առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը, աուդիտի աշխատանքային ծրագրերը և մյուս համապատասխան փաստաթղթերը վերջնական տեսքի են բերվել սահմանված ժամկետներում: Գործուղման պահանջագրերը, հրամանները և այլ կազմակերպման պայմանավորվածությունները կատարվում են նախապես՝ աուդիտի ժամանակի կորուստը նվազագույնի հասցնելու նպատակով	3
7.	Բոլոր աշխատանքային փաստաթղթերը ստուգվում են, որպեսզի լինեն ամբողջական, ճիշտ և լիարժեք հիմնավոր են քննարկվող նախնական եզրակացությունները	4
8.	Առաջադրանքի աշխատանքը կատարվել է, և բոլոր աշխատանքային փաստաթղթերը ներկայացվել են ժամանակին	3
9.	Ստացված արդյունքներում ներառվում են չափանիշները, պայմանը, պատճառը, ազդեցությունը: Առաջարկություններում անդրադարձ է կատարվում պատճառներին	3
10.	Հայտնաբերված թերացումների ցանկը հաստատվել և ամփոփ ներկայացվել են աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության բոլոր համապատասխան օղակներին	4
11.	Արդյունքում աուդիտի աշխատանքային փաթեթը (աուդիտի աշխատանքային ծրագրեր, աշխատանքային փաստաթղթեր, հաշվետվություններ, և այլն) բավարարում է նախատեսվող ընթերցողին և հստակ հաղորդում են խնդիրի էությունը	3
12.	Քննարկվող նախնական հաշվետվությունում անդրադարձ է կատարվում առաջադրանքի բոլոր նպատակներին	4
13.	Նախնական հաշվետվությունների քննարկման և վերջիններիս աուդիտի ենթարկվող միավորի կողմից տրվող նախնական պատասխանների տրամադրման ժամկետները պահպանվել են	4
14.	Առաջադրանքը նպաստել է կազմակերպության համար հավելյալ արժեքի ավելացմանը	3
	Ընդամենը	50
	Միջին գնահատականը	3.57

Աուդիտի ենթարկվող միավորների կողմից լրացված ստուգաթերթով տրված գնահատականները

	Գնահատմանտարրեր	Միջին գնահատական
15.	Ստացել եք արդյոք առաջադրանքի մասին տեղեկացնող ծանուցում նախքան առաջադրանքի մեկնարկը	3.67
16.	Արդյոք սկզբնական հանդիպումն անցկացվել է նախքան առաջադրանքի մեկնարկը կամ այն սկսելուն զուգահեռ	3.33

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն		
		17.	Արդյոք սկզբնական հարցազրույցի ժամանակ Ձեզ հետ քննարկվել են առաջադրանքի նպատակները, շրջանակները, ժամկետները և կազմակերպչական այլ հարցեր	3.67
		18.	Արդյոք հարցազրույցի ժամանակ Ձեզ հարցրել են առաջադրանքի վերաբերյալ Ձեր մտահոգությունների մասին	3.67
		19.	Արդյոք աուդիտորներն արձագանքել են առաջադրանքի վերաբերյալ Ձեր մտահոգություններին	3.67
		20.	Դուք տեղեկացվել եք առաջադրանքի ժամկետների փոփոխություններին	3.33
		21.	Մեկնարկային հարցազրույցի ժամանակ արդյոք եզրափակիչ հանդիպման համար նախնական ժամկետ է սահմանվել	3.67
		22.	Արդյոք աուդիտորներն արագ են արձագանքել Ձեր աշխատանքային իրավիճակի առանձնահատկություններին	3.33
		23.	Արդյոք առաջադրանքի ընթացքում Դուք պարբերաբար տեղեկացվել եք էական հարցերի մասին՝ դրանց զարգանալուն զուգընթաց	3.67
		24.	Արդյոք Ձեզ տրամադրվել է նախնական հաշվետվության կրկնօրինակը՝ եզրափակիչ հանդիպումից առաջ	3.67
		25.	Արդյոք Դուք կամ Ձեր աշխատակազմի հիմնական անդամները մինչ նախնական հաշվետվության տրամադրումը տեղեկացվել եք ամփոփված բոլոր էական հարցերի մասին	3.67
		26.	Արդյոք եզրափակիչ հանդիպումը տեղի է ունեցել համաձայնեցված ժամկետներում	3.67
		27.	Արդյոք եզրափակիչ հանդիպման ընթացքում Ձեզ հետ քննարկվել են ստացված արդյունքները պատշաճ մանրամասնությամբ	3.67
		28.	Եզրափակիչ հանդիպման ժամանակ արդյոք բառերի փոփոխության, ոճի և ստացված արդյունքների տեսանկյունների հետ կապված հարցերին արձագանքելիս աուդիտորները ճկուն են գտնվել	3.67
		29.	Արդյոք եզրափակիչ հարցազրույցի ժամանակ քննարկվել են առաջադրանքի ընթացքում հայտնաբերված բոլոր թերությունները	3.67
		30.	Արդյոք Ձեր պատասխանները (կամ պատասխանելու ցուցումները) քննարկվել են հանդիպման ժամանակ	3.67
		31.	Ձեր կարծիքով այս առաջադրանքը որքանով է նպաստել հավելյալ արժեքի ստեղծմանը Ձեզ համար	3.67
			Ընդամենը	**61.3**
			Միջին գնահատականը	**3.6**

4.	Ամփոփագիր	Համայնքապետարանի ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան և 2021-2023 թվականների ռազմավարական ծրագրերին համապատասխան հաշվետու տարում պլանավորված երեք աուդիտորական առաջադրանքներից իրականացվել է երեքը: Իրականացվել են «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի, «Ապարան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի և «Ապարան համայնքի Արագածի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի ֆինանսական աուդիտ: Ներքին աուդիտորի պարտականությունները իրականացվել է «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կողմից, որը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներքին աուդիտորի որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում: 2021 թվականին իրականացված աուդիտորական առաջադրանքների ընթացքում հայտնաբերվել են թերություններ ու բացթողումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ. Արձանագրություններում տեղ գտած թերությունների հիման վրա կազմվել են վերջնական հաշվետվություններնշտկման գործողությունների ծրագրեր: Հայտնաբերված թերությունների, բացթողումների և կատարված առաջադրանքների արդյունքները քննարկվել են Ապարանի համայնքի ղեկավարի հետ անցկացրած ներքին աուդիտի նիստերում: «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ կողմից վերահսկվել է, որպեսզի շտկման գործողությունների ծրագրերով նախատեսված ժամկետներում վերացվեն նշված թերությունները և բացթողումները: Կազմակերպությունում ներդրված հսկողական համակարգերը հիմնականումգործել են արդյունավետ. անհրաժեշտ է ներդնել հսկողական համակարգեր նաև սպասարկման ոլորտներում: Ներքին աուդիտի իրականացման ընթացքում Ապարանի համայնքապետարանի կողմից աուդիտի շրջանակների սահմանափակման դեպքեր չեն արձանագրվել:
5.	Եզրակացություններ	Ներքին աուդիտի հետագա զարգացման համար «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն իրականացնում է ներքին աուդիտի որակի շարունակական և պարբերական գնահատումներ՝ աուդիտի ենթարկվող միավորների կողմից առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթի, ինչպես նաև ներքին աուդիտի

N	Հաշվետվության գլխի անվանում	Բովանդակություն
		Ստանդարտներին և վարքագծի կանոններին համապատասխան գնահատման ստուգաթերթերի միջոցով: Ներքին աուդիտորի պահանջմունքներից է մասնագիտական կարողունակության ապահովումը, որն էլ իրականացվում է շարունակական մասնագիտական վերապատրաստումների, ինչպես նաև ինքնակրթության միջոցով:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 18-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2021Թ. N105-Ա ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՄԱՍԻՆ N3 և N7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի պահանջներով, ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակազմերի 2022թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերի հաստատման՝

N 3 և N 7 հավելվածներում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

N 3 հավելվածում՝ Ապարան համայնքի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ում բացել «լեռնադահուկի,, խումբ՝ թվաքանակը՝ 1, հաստիքային միավորը՝ 0,85, մարզիչի համար սահմանած դրույքաչափով:

N 7 հավելվածում՝ Ապարան համայնքի արվեստի դպրոց ՀՈԱԿ-ում՝ սահմանել 1 պահակի 0,85 հաստիքային միավոր, դրույքաչափը՝ 94.000 ՀՀ դրամ:

Նվագակցողի 16 դասաժամն ավելացնել 24-ով՝ դարձնելով 40 դասաժամի:

3.Որոշումը ուժի մեջ է մտնում 2022 թ մարտի 1-ից:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 19-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2021 Թ N 104-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՄԱՍԻՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի պահանջներով, ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարանի համայնքապետարանի աշխատակազմի 2022թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերի հաստատման N 2 հավելվածում անասնաբույժերի թվաքանակը 12-ից դարձնել 13՝պահպանելով սահմանված հաստիքային միավորը:

2. Որոշումը կիրառել 2022 թ փետրվարի 1-ից:

Ավագանի՝	(կողմ-17)	(դեմ-0)	(ձեռնպահ-1)
	Կարապետյան Արկադի		Ասատրյան Արամ
	Մակարյան Վահան		
	Պետրոսյան Գոռ		
	Սեդրակյան Հայկ		
	Կարապետյան Կարեն		
	Ենոքյան Դավիթ		
	Խալաթյան Արթուր		
	Ավդալյան Արարատ		
	Գեղամյան Խաչիկ		
	Մանուկյան Աղաբեկ		
	Երեմյան Աղվան		
	Սահակյան Հովհաննես		
	Փարվանյան Արթուր		
	Սաֆարյան Սևակ		
	Սարգսյան Սուրեն		
	Սարգսյան Արշակ		
	Կարապետյան Արտյոմ		

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

Հավելված 1
Ապարան համայնքի ավագանու
25.02.2022թ. թիվ 19-Ա որոշմամբ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՐԵՐԸ
2022 Թ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԵՐԻ

Հ/Հ	N	Սպասարկվող համայնքներ	Թվաքանակ	Հաստիքային միավոր	Դրույքաչափը /ՀՀ դրամ	Աշխատավարձի չափը /ՀՀ դրամ
1	1	Ապարան	1	0,77	95.000	73.150
2	2	Լուսագյուղ	1	0,71	95.000	67.450
	3	Նիգավան				
3	4	Սարալանջ	1	0,43	95.000	40.850
	5	Ձորագլուխ				
	6	Թթուջուր				
4	7	Վարդենիս	1	0,28	95.000	26.600
5	8	Կայք	1	0,44	95.000	41.800
	9	Չքնաղ				
6	10	Քուչակ	1	0,77	95.000	73.150
7	11	Եղիպատրուշ	1	0,34	95.000	32.300
8	12	Արագած	1	0,7	95.000	66.500
9	13	Ծաղկաշեն	1	0,65	95.000	61.750
	14	Արայի				
10	15	Վարդենուտ	1	0,66	95.000	62.700
11	16	Հարթավան	1	0,9	95.000	85.500
	17	Շենավան				
	18	Երնջատափ				
	19	Շողակն				
12	20	Ափնագյուղ	1	0,3	95.000	28.500
13	21	Մելիքգյուղ	1	0,55	95.000	52.250
		Ընդամենը՝	13	7,5	95.000	712.500

Աշխատակազմի քարտուղարի Ժ/պ՝ Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 20-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.12.2021Թ. N 106-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ՄԱՍԻ N 1.4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական տուրքերի և վճարների մասին'' ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքում Տեղական տուրքերի և վճարների 2022թ. տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանու 27.12.2021 թ N 106- Ա որոշման N 1.4 հավելվածի՝ արվեստի դպրոցների սովորողներին տրված արտոնությունների բաժնի 5-րդ տողում կատարել հետևյալ փոփոխությունները՝

-,,Միջազգային փառատոներում հաղթողներ,, նախադասությունը փոխարինել՝

,,Միաժամանակ 2 խմբերում ընդգրկված երեխայի համար՝ 2-րդը՝ 50 %,, նախադասությամբ

2. Որոշումը կիրառել 2022 թ փետրվարի 1-ից:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 21-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ/ՏԱՊ/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, 82-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, համաձայն ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթների, հիմք ընդունելով Հարթավան գյուղի բնակչության կողմից բարձրացված՝ գյուղի ,,Դումոյ ագոներ,, կոչվող տարածքում 1980-ական թվականներին կառուցված և ներկայումս վթարային վիճակում գտնվող փոքր ջրամբարի հիմնանորոգման հրատապության ու առաջնահերթության ուղղությամբ ավագանու ՔՊ խմբակցության առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հարթավան գյուղի ջրամբարի հիմնանորոգման աշխատանքներն /պատվարի վերանորոգում, տիղմից մաքրում, բետոնյա արգելապատնեշի վերակառուցում/ ընդգրկել համայնքի 2022թ. ՏԱՊ ծրագրում:
2. Ապարան համայնքի ավագանու 27.01.2022թ. N 04-Ա որոշման հավելվածում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Հրատապ կարգով կատարել ջրամբարի հիմնանորոգման մասնագիտական հիդրոտեխնիկական ուսումնասիրություն և տրված եզրակացության հիման վրա սահմանված կարգով ձեռք բերել նախագծային-նախահաշվային փաստաթղթեր:
4. Ծրագրի ֆինանսավորումն իրականացնել ՏԱՊ-ի մյուս ծրագրերից տնտեսումների, ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդի, ինչպես նաև լրացուցիչ միջոցների ներգրավման հաշվին:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 22-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ /ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Հողային օրենսգրքի 76-77-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, համաձայն ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի պահանջների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան համայնքում հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝
1.1. Կարապետյան Արկադի – համայնքապետի 1-ին տեղակալ –հանձնաժողովի նախագահ
1.2. Գալստյան Ռոբերտ – համայնքապետարանի բաժնի պետ – հանձնաժողովի անդամ
1.3. Սուքիասյան Վահե - համայնքապետարանի գլխավոր մասնագետ – արձանագրող
1.4. Սարգսյան Լևոն - համայնքապետարանի գլխավոր մասնագետ - աճուրդավար
1.5. Ավագանու անդամ՝ Աղաբեկ Մանուկյան/ ԿԵ դաշինք
1.6 Ավագանու անդամ՝ Վարդան Մխիթարյան/ԿԵ դաշինք
1.7 Ավագանու անդամ՝ Արշակ Սարգսյան/ՔՊ
2.Մրցութային հանձնաժողովին՝բոլոր հնարավոր միջոցներով պատշաճորեն ապահովել մրցույթների կազմակերպման հրապարակայնությունը, թափանցիկությունը և օբյեկտիվությունը:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 23-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 16-Ն, 14.04.2011թ. թիվ 389-Ն և 02.09.2016թ. թիվ 898-Ն որոշումների պահանջներով, նպատակ ունենալով կանոնակարգելու Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը և վարձակալության տրամադրման վարձավճարների դրույքաչափերը, համաձայն ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող խոտհարքների և արոտավայրերի օգտագործման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հաստատել Ապարան համայնքի վարչական տարածքում գտնվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման տրամադրման 1հա-ի վարձավճարը՝ համաձայն հավելված 2-ի և 3-ի:

3.Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2010թ. թիվ 1477 որոշման համաձայն՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերը կնքվում են պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու տրամադրումը իրականացնել սույն որոշմամբ սահմանված կարգի խիստ պահպանմամբ:

5.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը գյուղատնտեսության, բնապահպանության և կոմունալ տնտեսության բաժնի վրա:

6.Ուժը կորցրած ճանաչել 07.03.2018թ. թիվ 16-Ա որոշումը:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

Հավելված 1
Ապարան համայնքի ավագանու
25.02.2022թ. թիվ 23-Ա որոշմամբ

Կ Ա Ր Գ

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:

2. Սույն կարգի նպատակներն ու խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների պահպանության և կայուն ու արդյունավետ օգտագործման գործընթացներին նպաստումը.

2) արոտավայրերի և խոտհարքների բերքատվության բարձրացման և վերականգնման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

3) արոտավայրերի և խոտհարքների որակական բնութագրերի և բնապահպանական վիճակի վատթարացման կանխումը.

4) արոտավայրերի և խոտհարքների սանիտարական վիճակում պահպանության ապահովմանը նպաստելը:

3. Մինչև արոտավայրերի օգտագործումը կազմվում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:

4. Արոտավայրերի կայուն և արդյունավետ օգտագործման նպատակով կիրառվում է արոտաշրջանառություն՝ հետևյալ սկզբունքներով՝

1) մինչև արոտային շրջանի սկսվելն ընդհանուր արոտավայրը բաժանվում է առանձին արոտամասերի (արոտաբաժինների), որոնք արածեցվում են որոշակի հերթականությամբ.

2) արածեցման հերթականությունը յուրաքանչյուր տարի փոփոխվում է.

3) նախորդ տարվա վերջին արածեցված արոտամասը հաջորդ տարում չի արածեցվում, թողնվում է «հանգստի»:

5. Արոտային շրջանի սկիզբը և ավարտը սահմանվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով տվյալ տարվա կլիմայական պայմաններից:

6. Արոտային շրջանի տևողությունը հանրապետության ցածրադիր, հարթավայրային և նախալեռնային գոտիներում կազմում է՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 210-240 օր, մանր եղջերավոր կենդանիների համար՝ 270-300 օր, իսկ բարձր լեռնային գոտիներում համապատասխանաբար՝ 150-170 օր և 180-210 օր:

7. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածեցումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է՝

1) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 2-3 անգամ.

2) տափաստանային գոտում՝ 3-4 անգամ.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 4-5 անգամ.

4) ենթալպյան գոտում՝ 5-6 անգամ.

5) ալպյան գոտում՝ 3 անգամ:

8. Կենդանիների արածեցումն սկսվում է գարնանը բույսերի վերաճն սկսվելուց 15-18 օր հետո, երբ արոտավայրում բույսերը հասել են հասունացման, իսկ արոտականաչի բարձրությունը հողի մակերեսից կազմում է՝

1) կիսաանապատային, չոր տափաստանային և ալպյան գոտիներում՝ 6-8 սմ.

2) տափաստանային գոտում՝ 10-12 սմ.

3) մարգագետնատափաստանային, հետանտառային և ենթալպյան գոտիներում՝ 12-15 սմ բարձրություն:

9. Մեծ թեքություններում (15° և բարձր), որտեղ առկա է հողատարման (էրոզիա) վտանգ և բուսածածկը համեմատաբար թույլ է, արածեցումը կատարվում է սահմանված ժամկետից 10-12 օր անց:

10. Կենդանիների արածեցման համար հատկացվող արոտատարածքի մակերեսը սահմանվում է՝ ելնելով արոտային թույլատրելի բեռնվածությունից:

11. Արոտային թույլատրելի բեռնվածությունն արտահայտվում է մեկ հեկտարի վրա տեղաբաշխվող պայմանական անասնագլխաքանակով և որոշվում հետևյալ բանաձևով՝

$$ԱԹԲ = \frac{Բ}{Պ \times Տ},$$

որում՝

ԱԹԲ-ն՝ արոտավայրի թույլատրելի բեռնվածությունն է,

Բ-ն՝ 1 հա արոտավայրի բերքատվությունն է (խոնավ արոտականաչի զանգվածը), կգ/հա,

Պ-ն՝ 1 պայմանական անասնագլխաքանակի օրվա արոտակերի պահանջն է՝ կգ,

Տ-ն՝ արոտային շրջանի տևողությունը՝ օրերով:

12. Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակին տարբեր գյուղատնտեսական կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝

1) կով, արտադրող ցուլ՝ 1.0.

2) խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0.66.

3) մանր եղջերավոր կենդանի՝ 0.1:

13. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ արոտատարածքը կազմում է՝

1) կիսաանապատային գոտում՝ 6-7 հա.

2) տափաստանային գոտում՝ 2-2.5 հա.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 1.5-1.7 հա.

4) ենթալպյան գոտում՝ 1-1.2 հա.

5) ալպյան գոտում՝ 2-2.5 հա:

14. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային (համակարգված) արածեցումն է, որի կիրառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝

1) կիսաանապատային և չոր տափաստանային արոտավայրերում՝ 40-60 հա.

2) տափաստանային արոտավայրում՝ 20-40 հա.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային արոտավայրերում՝ 20-30 հա.

4) ենթալպյան և ալպյան արոտավայրերում՝ 10-20 հա:

15. Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը բաժանվում է հետևյալ թվով արոտավանդակների՝

1) ալպյան գոտում՝ 8-10.

2) ենթալպյան գոտում՝ 10-12.

3) մարգագետնատափաստանային և հետանտառային գոտիներում՝ 12-16.

4) տափաստանային գոտում՝ 16-20.

5) կիսաանապատային և չոր տափաստանային գոտիներում՝ 20-40:

16. Արոտավանդակներն առաջինից մինչև վերջինը, ըստ տեղադրվածության, արածեցվում են սահմանված հերթականությամբ՝ մինչև բոլոր արոտավանդակների արածեցման ավարտը, որից հետո կենդանիները դարձյալ փոխադրվում են առաջին արոտավանդակ և սկսվում է արածեցման հաջորդ բոլորապտույտը՝ ըստ հերթականության:

17. Արածեցված արոտավայրերում բույսերի կայուն վերաճ ապահովելու նպատակով արածեցման երկրորդ բոլորապտույտը պետք է սկսել առաջին բոլորապտույտի ավարտից 20-25 օր հետո, հաջորդ բոլորապտույտները՝ 35-40 օր անց, իսկ արոտավանդակներում արածեցման տևողությունը պետք է կազմի առաջին բոլորապտույտում՝ 2-3 օր, հաջորդ բոլորապտույտներում՝ 3-5 օրից ոչ ավելի:

18. Արոտավայրերում կենդանիների մակատեղերը (գիշերավայրը) պետք է կառուցել՝ ջրելատեղերից 300-500 մ հեռավորության վրա:

19. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝

1) կթու կովերի համար՝ 1-1.5 կմ-ից ոչ ավելի.

2) բտվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար՝ 1.5-2.5 կմ-ից ոչ ավելի:

20. Արոտավանդակների սահմանազատման նպատակով, որպես բնական սահմաններ, կարող են ծառայել արոտատարածքում առկա ձորակները, գետակները, հեղեղատները, թեքությունները, բացատները, թփուտները, ճանապարհները, իսկ դրանց բացակայության դեպքում անհրաժեշտ է օգտագործել շարժական ցանկապատեր, որոնցից առավել արդյունավետ են էլեկտրացանկապատերը:

21. Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտհնձի նպատակով: Խոտհնձի լավագույն ժամկետ է սահմանվում բուսածածկում գերակշռող արժեքավոր հացազգի (դաշտավլուկազգի) խոտաբույսերի հասկակալումից մինչև ծաղկման, իսկ թիթեռնածաղկավոր (բակլազգի) խոտաբույսերի դեպքում՝ կոկոնակալումից մինչև ծաղկման փուլն ընկած ժամանակաշրջանը:

22. Բնական խոտհարքներում խոտհունձն իրականացվում է 7-10 օրվա ընթացքում, երբ խոտի բարձրությունը հողի մակերեսից կազմում է 4-6 սմ:

23. Բնական խոտհարքներում յուրաքանչյուր երրորդ տարում խոտհունձն իրականացվում է խոտհնձի սեզոնի վերջում՝ բույսերին սերմնակալման և բնական վերարտադրության հնարավորություն ընձեռելու նպատակով:

Հավելված 2

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՁՈՒՏ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԸ

Համայնքների անվանումները	Գնահատման անվանումը	Հողերի գնահատման խմբերը	Բնական կերահանդակներ/հեռագնաց/					
			Խոտհարք		Արոտ		Խոտհարք	Արոտ
			Տարածությունը հա	Զուտ եկամուտ հազար դր/հա	Տարածությունը հա	Զուտ եկամուտ հազար դր/հա	Հողի հարկ 1 հազար դր/հա	Հողի հարկ 1 հազար դր/հա
Ապարան	Ալպյան	4			200.0	8.16	0	1.224
	Ենթալպյան	3	26.20	21.8	571.63	17.52	3.27	2.628
Արայի	Ենթալպյան	2			14.82	24.52	0	3.678
		3	18.07	21.8	480.74	17.52	3.27	2.628
		4			311.05	10.52	0	1.578
	Ալպյան	3			360.38	13.6	0	2.04
		4			690.74	8.16	0	1.224
Արագած	Ենթալպյան	3			217.26	17.52	0	2.628
	Ալպյան	3	5.86	16.9	317.59	13.6	2.538	2.04
		4			635.34	8.16	0	1.224
		5			696.27	2.72	0	0.408
Չքնաղ	Ենթալպյան	3			284.15	17.52	0	2.628
		4			197.21	10.52	0	1.578
Ծաղկաշեն	Ենթալպյան	2			11.40	24.52	0	3.678
		3			95.00	17.52	0	2.628
	Ալպյան	3			107.12	13.6	0	2.04
		5			165.38	2.72	0	0.408
Ձորագյուխ	Ենթալպյան	2			13.59	24.52	0	3.678
		3	21.21	21.8	294.32	17.52	3.27	2.628
		4			251.34	10.52	0	1.578
Եղիպատրուշ	Ենթալպյան	3			180.88	17.52	0	2.628

Երնջատափ	Անտառմարգագետնային	4	347.08	12.24	5.15	9.24	1.836	1.386
Լուսագյուղ	Ենթալպյան	3			393.48	17.52	0	2.628
Նիգավան	Ենթալպյան	3			237.23	17.52	0	2.628
		5			272.21	3.52	0	0.528
	Ալպյան	3			2.76	13.6	0	2.04
		4			147.44	8.16	0	1.224
		5			745.93	2.72	0	0.408
Ջրամբար	Մարգագետնատափաստանային	3	6.79	17.52	13.08	13.6	2.628	2.04
Քուչակ	Ենթալպյան	2			40.54	24.52	0	3.678
		3			153.38	17.52	0	2.628
	Ալպյան	3			165.24	13.6	0	2.04
		4			3.17	8.16	0	1.224
Սարալանջ	Ենթալպյան	4			270.67	10.52	0	1.578
	Անտառմարգագետնային	3	12.54	20.4			3.06	0
		4			1.77	9.24	0	1.386
Շնավան	Ենթալպյան	3			45.33	17.52	0	2.628
		4			82.59	10.52	0	1.578
	Ալպյան	3			98.97	13.6	0	2.04
		4			140.61	8.16	0	1.224
Թթուջուր	Ենթալպյան	3			320.114	17.52	0	2.628
		4			197.71	10.52	0	1.578
Վարդենիս	Ենթալպյան	3			172.86	17.52	0	2.628
	Ալպյան	3			11.55	13.6	0	2.04
		4			75.88	8.16	0	1.224
Վարդենուտ	Ալպյան	3			198.69	13.6	0	2.04
		4			40.18	8.16	0	1.224
	Ենթալպյան	3	8.29	21.8	1187.33	17.52	3.27	2.628
		4			630.09	10.52	0	1.578
Հարթավան		0	0	0	0	0	0	0
Կայք		0	0	0	0	0	0	0

Ափնագյուղ		0	0	0	0	0	0	0
Շողակն		0	0	0	0	0	0	0
Մելիքգյուղ		0	0	0	0	0	0	0

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ի.Թադևոսյան

Հավելված 3

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ԶՈՒՏ ԵԿԱՄՈՒՏԸ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԸ

ՀՀ	Համայնքների անվանումը	Բնական կերահանդակների/գյուղամերձ/		
		Արոտ		
		Հողերի գնահատման խմբերը	Զուտ եկամուտ հազար դր/հա	Հողի հարկ հազար դր/հա
1	Ապարան	4	15.2	2.28
2	Արայի	2	35.4	5.31
		4	15.2	2.28
3	Արագած	4	15.2	2.28
4	Չքնաղ	4	15.2	2.28
5	Ծաղկաշեն	2	35.4	5.31
		4	15.2	2.28
6	Զորագլուխ	1	45.5	6.825
		3	25.3	3.795
		5	5.1	0.765
7	Եղիպատրուշ	1	45.5	6.825
		4	15.2	2.28
8	Երնջատափ	2	35.7	5.355
		5	5.1	0.765
9	Լուսագյուղ	2	35.4	5.31
		4	15.2	2.28
		5	5.1	0.765
10	Նիգավան	2	35.4	5.31
		3	25.3	3.795
11	Ջրամբար			0
12	Քուչակ	4	15.2	2.28
		5	5.1	0.765
13	Սարալանջ	5	5.1	0.765
14	Շենավան	3	25.3	3.795
15	Թթուջուր	4	15.2	2.28
		5	5.1	0.765
16	Վարդենիս	4	15.2	2.28
17	Վարդենուտ	4	15.2	2.28
18	Ափնագյուղ	4	15.2	2.28
19	Շողակն	3	25.3	3.795
20	Հարթավան	4	15.2	2.28
21	Կայք	4	15.2	2.28
22	Մելիքգյուղ	4	15.2	2280
		5	5.1	0.765

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 24-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԳՐԱՆՏ ՌՈԶ» ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ ենթակետի պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող ,,ԳՐԱՆՏ ՌՈԶ,, ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող /02-102-0114-0036 կադաստրային ծածկագրով/ 2.8056հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նշանակության փոխելուն և դարձնել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության:
2. Ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողամասում կառուցվելու է ջերմոցային տնտեսություն:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 25-Ա

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 02-111-0324-0001 ծածկագրից 0.76059հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության և 02-111-0321-0001 ծածկագրից 2.63344հա ջրային նպատակային նշանակության լճերի գործառնական նշանակության հողամասերը փոխելուն և այն դարձնել որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության:

2. Ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողատարածքները սեփականաշնորհման հանձնաժողովի կողմից քաղաքացիներին հատկացվել են որպես գյուղատնտեսական վարելահող, սակայն կադաստրային քարտեզներում ժամանակ հաշվառված են որպես պետական սեփականություն:

3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 26-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՂԱԿՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-077-0101-0002 ծածկագրից՝ 0,07137հա գյուղատնտեսական արոտավայրի նշանակությունները փոխելուն և այն դարձնել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.Ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողակտորը հարակից է բնակելի կառուցապատման հողամասերին և նպատակահարմար է բնակելի կառուցապատման համար:

3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 27-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 07.10.2021թ ՀՀ կառավարության 1661-Ա որոշմամբ Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող մի շարք համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր ճանաչվել են հանրային գերակա շահ և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական սահմաներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք 07.10.2021թ ՀՀ կառավարության 1661-Ա որոշումամբ ճանաչվել են հանրային գերակա շահ, ուղղակի վաճառքով օտարել «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերությունը:
2.Հաստատել հողատարածքի օտարման գինը՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքով:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-2)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 28-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3.68967ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ գյուղի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 02-040-0310-0001 ծածկագրից՝ 3.40143հա և 0.28824հա ընդամենը՝3.68967հա գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայր գործառնական նշանակության հողամասը փոխելուն և այն դարձնել որպես անտառային նպատակային նշանակության անտառների գործառնական նշանակության:

2. Ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողակտորները ծածկված են անտառային շերտով, սակայն քարտեզագրման ժամանակ հաշվառվել է որպես արոտավայր: Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը նպատակաուղված է «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված ներդրումային ծրագրի իրագործմանը:

3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 29-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ և 245-րդ հոդվածի 2-րդ մասերի, ՀՀ կառավարության 22.06.2012թ-ի N 822-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի 6 բնակավայրերի 8 քաղաքացիների տրամադրել հարկային արտոնություններ՝ հողի հարկի տույժ 394.356 դրամի չափով, փոխադրամիջոցի գույքահարկի տույժ՝ 107.578 դրամի չափով, ընդամենը՝ 501.934 դրամ, համաձայն՝ հավելվածի:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

Հավելված
Ապարան համայնքի ավագանու
25.02.2022թ. թիվ 29-Ա որոշմամբ

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բնակավայր	Հ/Հ	Սոցիալական քարտ	Դիմողի Անուն,Ազգանուն	Հաշվառման հասցե	Սեփականա-տիրոջ Անուն,Ազգանուն	Գույքի գտնվելու հասցե	Հողի հարկ		Շինություն		Փոխադրամիջոց		Լրացուցիչ տեղեկու-թյուններ
							Ապառք	Տույժ	Ապառք	Տույժ	Ապառք	Տույժ	
Ապարան	1	2607640121	Քոչարյան Արծվիկ Վարազդատի	Ք.Ապարան Մ.Մաշտոցի 70/1		Ք.Ապարան		58216					Մայր գումարը վճարված է
	2	1804790397	Գեղամյան Արտակ Հովհաննեսի	Ք.Ապարան Ն.Ստեփանյան 22 տ.		Ք.Ապարան						41519	Մայր գումարը վճարված է
Եղիպատ-րուշ	1	3608860215	Ստեփանյան Ստեփան Սոսի	Ք.Երևան Աջափնյակ 80		Գ.Եղիպատր.		48343					Մայր գումարը վճարված է,2-րդ կարգի հաշմանդամ
	2	5207490150	Հայրապետյան Մարգարիտ Նահապետի	Գ.Եղիպատրուշ 14փ.տ.1		Գ.Եղիպատր.		92700					Մայր գումարը վճարված է,կենսաթոշակառու,որդին 2-րդ կարգի հաշմանդամ
Ծաղկաշեն	1	5301830945	Մարկոսյան Էլլա	Գ.Ծաղկաշեն 10փ. տ.15		Գ.Ծաղկաշեն						66059	Մայր գումարը վճարված է, սոց.անապահով
Ափնագյուղ	1	1312740370	Ղազարյան Կարեն	Գ.Ափնագյուղ 5փ. 1նրբ.տ.1		Գ.Ափնագյուղ		105245					Մայր գումարը վճարված է: Նախկին տիրոջից փոխանցված պարտքեր:
Թթուջուր	1	2505700036	Գրիգորյան Վիգեն /համասեփակա-նատեր/	Գ.Թթուջուր Հ.Նահապետի փ.տ.21	Գրիգորյան Աիդա	Գ.Թթուջուր		68980					Սեփ.մահացած է,մայր գումարը վճարված է
Քուչակ	1	1101470143	Անտոնյան Սահառուն	Գ.Քուչակ 1խճ.39 նրբ.տ.6		Գ.Քուչակ		20872					Մայր գումարը վճարված է,կենսաթոշակառու
	8	ԸՆԴԱՄԵՆԸ						394356				107578	

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ի. Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 30-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊՁԲ-09/22 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապարան համայնքի ավագանու 27.01.2022թ. N03-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հոդվածային ծախսերով նախատեսված, Ապարան համայնքի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊՁԲ-09/22 ծածկագրով ծաղիկների ձեռք բերման համար 17.02.2022թ. գնումների պաշտոնական կայքում մուտքագրված էլեկտրոնային աճուրդով գնումը չի կայացել՝ համակարգի խափանման պատճառով:
Համաձայն ՀՀ ֆինասների նախարարության գնումների քաղաքականության վարչության մասնագետի կողմից ստացված էլեկտրոնային նամակի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդրի ամենասեղմ ժամկետում լուծման դեպքում անգամ, գնման ընթացակարգը հնարավոր չէ իրականացնել գնման պահանջով նախատեսված ժամկետում, ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության N526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի, ա) և բ) պարբերությունների պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է

1.Թույլատրել Ապարան համայնքի ղեկավարին ս/թ մարտի 8-ին ընդառաջ ծաղիկների ձեռքբերման նպատակով, հրատապ մեկ անձ մրցույթի ձևով գնում կատարել:
2.Ապարան համայնքի կարիքների համար ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԱՊՁԲ-09/22 ծածկագրով ծաղիկների ձեռք բերման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության armeps համակարգ մուտքագրված հրավերը համարել անվավեր՝ համակարգի խափանման պատճառով:

Ավագանի՝	(կողմ-18)	(դեմ-0)	(ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆ N 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով,

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2022 թվականի մարտի 25-ը, ժամը 15:00:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26:

Ավագանի՝ (կողմ-18) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Մակարյան Վահան
Պետրոսյան Գոռ
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Երեմյան Աղվան
Սահակյան Հովհաննես
Փարվանյան Արթուր
Ասատրյան Արամ
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Սուրեն
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Կարապետյան